

ԳՈՆԻԱՑԻՆ

Աստուծոյ կողմէ չէ, որ ստեղծուած է Գոնիացին: Ալլահին ձեռքերէն ելած պտուղ մըն է ան: Երբ Ալլահ իր այս երկին շունչ կուտայ, կը ներկայանայ Աստուծոյ՝ ամնելու համար կարծիք:

Աստուած քննելէ վերջ իր առջեւ դրուած ապրանքը, կը հարցնէ Ալլահին.

-Ի՞նչ ընելու ընդունակ է այս արարածը:

Ալլահ պատասխան կուտայ.

-Կրնայ անմիջեւ իջնալով «Գոնեալը» երգել ու պարել: Կրնայ շիշերով օղի խմել, կաթսաներով կերակուր ուտել եւ քաջաբար թրթրէն խօսիլ: Իբրեւ այր քաջ՝ կրնայ կնիկ ալ ծեծել: Ըսածիս մէջ ո՛չ սուտ կայ, ո՛չ ալ սխալ:

Եւ Ալլահ կը հրամայէ Գոնիացիին, որ երգէ ու պարէ: Գոնիացին չի հնազանդիր՝ նեղ դրուութեան մէջ դնելով զինքը ստեղծողը: Ալլահ կը քրտնի ու կրկին կը հրամայէ: Գոնիացին, Աստուծոյ առջեւ տպաւորութիւն գործելու համար, կը պատասխանէ թրթրէն ոտանաւորով մը, որուն մէկ մասը կը հայացնենք.

-Կընիկ պէյագ,

Օղի պիրագ,

Առանց անոնց,

Երգ, պար օլմագ

Կամ եարամագ:

Աստուած կը թքնէ Գոնիացիին երեսը, իսկ Ալլահ, ուրանալով իր ձեռակերտը, սաղայելի մը կը յանձնէ զայն, որպէսզի փճացուի դժոխոց հուրերուն մէջ:

Սատանան սակայն կ'ըսէ Գոնիացիին.

-Քեզի դուրսէն վառելու չէ, այլ ներսէն: Երկիր իջնես, օղի խմես ու այրիս: Կին տեսնես ու այրիս: Ամառը վառիս ու ձմեռը բռնկիս:

Ու անկէ ի վեր բոցերու մէջ է Գոնիացին: Իր մէջ ինչ որ դնես, վայրկենապէս կը վառի, կը լմնայ: Գիտութիւն դիր իր մէջ՝ ժամ մը վերջը կը գտնես մոխիր: Հայութիւն դիր իր մէջ՝ պահիկ մը վերջը՝